Շիրակավան

Վարչական ղեկավար՝ Սլավիկ Վարոսյան

Հեռ 077 29 07 27

Մակերես՝ 18.7կմ^2

Բնակչություն՝ 756

shirakavan.shirak@mta.gov.am

Գյուղ Մարալիկի տարածաշրջանում, Մարալիկ քաղաքից 15կմ հուսիս-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 20կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Դավշան, Դավշանղլաղ, Դովշան, Թավշան, Շիրակվան, Տավշան անվանումները: Շիրակավան է վերանվանվել 1950 թ-ին: Գյուղը տեղադրված է Երևան-Գյումրի ավտոմայրուղու վրա: Հիմնադրվել է 1976 թ-ին Ախուրյանի ջրամբարի տարածքում մնացած նախկին Շիրակավան գյուղը ապաբնակեցնելուց հետո: Գյուղը տեղադրված է Շիրակի սարահարթում՝ ծովի մակարդակից 1510մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 450-500մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Ունի սև տուֆի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն: 1926 թ-ի Գյումրիի երկրաշարժից հետո այստեղ սկսել են բխել տաք աղբյուրներ: Գյուղը զգալի տուժել է 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:
1831 թ-ին գյուղն ունեցել է 403, 1897 թ-ին՝ 903, 1926 թ-ին՝ 685, 1939 թ-ին՝ 786, 1959 թ-ին՝ 454, 1979 թ-ին՝ 432, 1989 թ-ին՝ 933 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 756 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 50%, հետաշխատունակներ՝ 21%: Ունի 80 տնտեսություն: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 459հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 66 և 457 հեկտար: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ, պտուղներ: Նախկինում համեմատաբար մեծ մակերես են զբաղեցրել շաքարի ճակնդեղի ցանքերը, որոնք կրճատվել են երկրաշարժի արդյունքում Սպիտակի գործարանի փլուզման պատճառով: Զբաղվում են նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:
ՀՀ Շիրակի մարզ, գ. Շիրակավան

Ինդեքս՝ 2909